


ԲԱԺՆԵՂԻՆ  
Մ. ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՄԱՐ  
Տարեկան \$1.50  
Վեցամսեայ 0.85  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 Թրանք  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան ղեկուած  
Նամակ կամ ծրար ետ  
չեն վերադարձուիր:

ԳԻՆ 8 ՍԵՆՏ.



# Հայրենեաց

ՇԱՐԱՔԱԹԵՐԹ

## ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻԱՅԻՆ  
AN ARMENIAN WEEKLY.  
27 1/2 Beach St., BOSTON.

ՀԱՍՏԷ  
AMERICAN HAI PUBLISHING CO  
8 Bennet Street, B.T.S.  
BOSTON, MASS.

Entered at the Post Office at  
Worcester, as Second-Class  
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Չայն-Հայրենեացը Պոսթօնի փոխադրած ենք: Հոս Պոսթօնի մէջ խմբագրական կարող մարմին մը կազմելով թերթին աւելի ճոխ պարունակութիւն տալու և գործի մասին շատ կարևոր դերութեանց միջոցները ունէինք:

Կը ցաւինք որ Չայն-Հայրենեացի վազանքը ծանուցուած ժամանակէն անդին անցաւ. որովհետև նախատեսած չէինք թէ տեղափոխութեան համար սոցքան երկար ատեն պիտի երթար:

Մեր բոլոր ընթերցողներուն և բարեկամներուն ուրախութեամբ կը ծանուցանենք թէ մեր այժմուս կարգադրութիւնները ամէն տեսակետով իրատ գոհացուցիչ են:

«Չայն-Հայրենեացի երկրորդ տարին կսկսի բաժանորդագրութիւնը բացուած է: Մեր նախկին բաժանորդներուն կը շարունակենք թերթը ղրկել, յուսալով թէ պիտի հասնին իրենց բաժանորդութիւնը պահելով զմեզ քաջակերպ: Իսկ անոնք որ չեն ուզեր թերթը ստանալ, կը հասնին մէկ թիւը առանց բանալու մեզի վերադարձուելի: Անոնք որ մինչև երկրորդ թիւը կը ընդունին թերթը և չեն վերադարձուներ՝ բաժանորդ պիտի նկատուին:

Յորոշած, թղթակցութիւն և դրամ ղրկել հետեւեալ հասցեով միայն:  
AMERICAN HAI PUB. CO.  
8 BENNET ST., BOSTON, MASS.

### ԱՂԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Այժմ որ Թրանսկական մեծ ազգը իր գեղարուեստի ու ճարտարութեան իր հրաշալիքները իցոյց կը դնէ փարիզի արուեստահանդիսին մէջ. նայն ատեն հոն թուրքի կարտին մէջ տեղի ունեցաւ խնձոյք մը, որ թէ իր մեծութեամբ, թէ ոգևորութեամբ և թէ նշանակութեամբ կը գերազանցէ ժամանակակից և հնադարեան բոլոր արքայական խնձոյքներն: Այդ ծաղկեալ հանրապետութեան նախագահն Լուպի. Թրանսի բոլոր քաղաքապետներուն և 25000 հրաւիրեալներու համար մեծ խնձոյք մը կազմակերպած էր, որուն առջև ամէն տեսակետի կը նստանար այն 15000 ի խնձոյքը որ Ձամզ սէ Մարդի մէջ կեր ու խումով նախաճաշն առաջինի, իր արիւնայեղ պատերազմներէն, յաղթական վերադարձը կողուներէն:

Եթէ մղոն տարածութեամբ սեղաններու շուրջը Թրանսի զաւակներէն 25000 կողք բազմած՝ 25000 զաւակներու շուրջներով ողջոյն կուտային նախագահ Լուպի. որ կայսր մը չէր՝ այլ Թրանսի համեստ զաւակներէն մէկ: Այդ ոգեւոր ըմպելեաց զաւակներու որոտընդոտ շառաչելը Թրանսի ազգային ոգևորութեան ձայնն էր, Թրանսական ժողովուրդը արեւելքէն արեւմուտք, հիւսիսէն հարաւ աստի կանգնած՝ կը ձայնէր իր նախագահին թէ, «Մենք քեզի հետ ենք»:

Խնձոյքին վրայ բաւական ամփոփ

զարգացումը կը կազմենք. եթէ աչքի առնէ բերնք այն 12 մեծ խոհանոցները որոց մէջ 3000 խոհարարներ կերակուր կը պատրաստէին, 8000 սպասարկուներու բանակ մը հինգական հարիւրաւոր գունդերու բաժանուած՝ մասակարարութիւն կընէին. հարիւրաւոր սպասարկուներ հեծելախմբերու և ինքնաշարժ կառուցիչներ կը տանէին արարչաւ. խնձոյքին մէջ գործածուած է 3000 վայրիազ, 8000 բաղ, 3000 փառուս սալոն, 8000 փառուս միս, 33000 շիշ կարմիր ու ճերմակ գինի, 9000 շիշ Եամբանիս և 1500 շիշ Պրանտի:

Սակայն այս բոլոր ներթական շքեղութիւններուն և ճոխութիւններուն մէջ խնձոյքին շարժառիթը, բարոյականը, ամենէն աւելի մեծ է. վստահ և շնորհաւոր ինչ նախազգաց Լուպի Թրանսական հանրապետութիւնը իր ներքին կատարի ու բազմազան հակառակորդներու դէմ կանգուն ու անվթար պահպանելու համար պէտք ունէր Թրանսական ազգին միահամուռ անկողնութեանը, ու այսօր նոյն իսկ նախագահին հակառակորդներն կը խոստովանին թէ նախագահ Լուպի այդ բազմազան յաջողութեամբ պահուած է այդ ազգային համագումարը խնձոյքի անուշ ու ոգելից մարմնացումով՝ Հանրապետութեան նախագահին հետ կապած է Թրանսական ժողովուրդին ահագին մեծամասնութիւնը, որով նա ինքզինքը հզօր կը գտնէ ամէն ազգամաս յարձակումներու դէմ:

Այս օրեր Ամերիկայի Հայոց համար ալ ազգային համագումար մը մէկ հրաւեր յայտարարութիւնը տեսանք Ամերիկայի Հայրենեացի պատգամաւորական ժողովին կողմէն: Անք զիտութիւնով այդ հրաւերը որ և է կուսակցական նըպատակ չունի. այդ յայտարարութիւնը հրապարակ ցնոյց մարմինը ամերիկայի Հայոց դասագան դասակարգերու ներկայացուցիչները ազգային համագումարի մը տակ ի մի բերելու գեղեցիկ զազարին նախաձեռնողը ըլլալու պարզ դերին անդին չանցնիր: Ազգային համագումարը կազմուելէն ետք ժողովին օրակարգը, արարքը, եզրակացութիւնները կախում պիտի ունենան հոն խմբող ներկայացուցիչներու արամադրութենէն և կամօքնէ:

Մեր դրացի յարգելի պաշտօնակիցը անցեալ շաբթոն ցաւ կը յայտնէր որ ամերիկայի Հայրենեացի նախագային վարչութիւնը Դաշնակցական կեդրոնական Կոմիտէին հետ իր բանակցութիւններուն մէջ, յեղափոխական համագումար մը կազմելու մասին իր պարտականութեանց մէջ թերացած է. և որ կը զարմանար ալ թէ ինչ կը նշանակէ այդ ազգային համագումարի հրաւերը, Հարկէ ուրեմն ըսել է թէ, այս հրաւիրեալ ազ-

գային համագումարը բոլորովին տարբեր է ինքզինք տակ եղած յեղափոխական համագումարէն. ըսինք թէ ասոր մէջ որ և է կուսակցական միտք չկայ: Կուսակցականները լաւ կընեն եթէ իրենց կուսակցական ինքիները կուսակցական շրջանի մէջ կարգադրել ջանան. եթէ զուտ յեղափոխական համագումարի պէտք կը տեսնեն՝ կրնան անոր իրականացումին աշխատիլ կուսակցական կողմից, որուն ի սրտէ կը փափագինք. և պատրաստենք մեր աջակցութիւնը նուիրել:

Ետ ամիսներ առաջ էր Թր Հայաստանի մեծ ու սնած և Հայոցած Ամերիկացի բարեկամս խոսակցութեան մը մէջ ըսաւ, «Ինչո՞ւ Ամերիկայի Հայերը տարին անգամ մը ազգային համագումար մը, (նշելը Բանվերը) չունենան, ուր զան հաւաքուին երկրի զանազան կողմերը ցրուած Հայրենակիցներու ներկայացուցիչները. միասին խորհին, խորհրդակցին, խօսին թէ՛ զաղթականութեանը և թէ՛ ընդհանուր ազգային պէտքերուն վրայ, ու ժողովին ընդհանուր որոշումներով ինքն իր կողմէն աջակցող յարմարութիւնը ներկայից միջոցաւ տարածուի. ամէն կողմ էլ այսպիսով յառաջ բերուի ազգային ընդհանուր ոգևորութիւն և զիտակցութիւն: Մենք որքան որ զիտենք, առաջադրուած ժողովը այս հայեացքն ունի, ուրեմն այդ պէս ալ պահենք անոր նշանակութիւնը:

Ամերիկայի Հայերուն ամէնքն ալ սրբաբարձի մէկ նպատակի կը նային, սակայն քանի՞ տարի Թրանսի բաժանուած են. իրարու անծանօթ, իրար չեն հասկնար. անգամ մը ամէնքս ալ մէկտեղ դանք. զիրար ընտանեակներ, մէկ մէկ հասկնանք, զիտակցութեան վառարան մը ստեղծենք. կեդրոնական ընդհանուր հասկացողութեան մը շուրջը. ու մը ըլլանք, և այդ ուժով գորացուենք մեր ազգային դատը: Ազգային համագումարի մէջ է որ պիտի տեսնենք թէ ամէնքս ալ նոյն Հայրենիքի զաւակներն ենք, նոյն փափակներն ենք, միայն թէ իրարու անկաղորդ մտադրելիս մէկ մէկ խորտաչոյզ կը նայինք. եթէ Ուստի ազգային համագումարին Հայաստանի ոգին վերապայտայ և Հայրենասիրութեան տաք շունչով իրարու զօղէ հոն հաւաքուած բանաստեղծին հետ «Տուր ինձ քու ձեռք եղբայր ենք մենք որ մորկաւ էինք զատուած, բախտին ամէն ոխ շարանեղի մի համարը ցրուին ի բաց, Ընք աստեղծ ինչ կայ սիրուն քան զանձկալի եղբայր անունս. Եթէ ինչ արգիւնք որ նախագահ Լուպի կազմած խնձոյքի ազգային համագումարը ունեցաւ, նոյն յառաջ բերէ մերը, Հայոց Ուստի ազգային համագումարը. հոն բոլորած քիչիքի զաւակներու տեղ, արեւան լի Հայաստանը, խորովածներով ճոխ սեղաններու

փոխան՝ դառնալով խորոված սրտերով Հայ որբերու, որբկարիներու, մերկերու, սովեակներու սոսկալի իրականութեան շուրջը, զաւակներու շառաչելուն տեղը մեր սրտերը խօսին և ճշգրտման պարտականութիւն առ մահապարտեայն Հայաստան. եթէ այս ազգային սեղանիկ համագումարը ապագային աւելի գործնական և արդիւնաւէտ ազգային համագումարներու ծնունդ տայ, ձեռնարկը ինքնին յաջողութեամբ պահուած կը համարուի:

Փափագելի է որ մեր կարող գրիչները այս նիւթին վրայ գրեն Չայն Հայրենեացի մէջ:

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԻՆԿՂԵՑԻՆ ԵՒ ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ՀԱՅՐ

Վերջերս Լուպի անգլիական թերթերէն միտն մէջ Փրոֆ. Կարապետեանի կողմէն տրուած կտոր մը տեսանք, որուն մէջ յարգելի Փրոֆեսորը կը գրէ թէ Հայաստանեայց եկեղեցին կրօնաւոր է իր կրօնական կենսունակութիւնը. նա յաւատարմութեամբ կազմակերպութիւն մը եղած է. թէ անոր մէջ քիչ են ուսեալ կղերներ:

Կընդունինք թէ այդ ըսուածներուն առաջինն ալ ճշմարիտ է Աւետարանչական առումով:

Ինչո՞ւ, սակայն, եկեղեցին կորուսած է իր կրօնական այդ կենսունակութիւնը, ինչո՞ւ նա տգէտ կղերականներու անկեղծ զարմօք է, այն եկեղեցին որ, ինչպէս յարգելի Փրոֆեսորն ալ կընդունին, երբեմն կենսալի ետն ու եփը ընկեր, անկէ մեր Ոսկեղարը կը ծնանէր և մեր շրջակայ դրացի ազգեր կենալու լոյս կստանային անոր միջոցաւ. ինչո՞ւ Սաահակներու, Մետրոպոլիտան, Երեւանի թեմերու, ներսէններու տեղը Բարձրագիմէտներու ոտք դրեր են այսօր: Թող խօսին ձինկիխաններու, Լէնկիթիմուրներու, Եւս-Արաքներու արիւն թաթաւ սուրբը որոնք մեր կուսանանց, մեր մանկանց ու մեր քաջերու արիւնով արբեցած են, թող խօսի Համիտին սուրբ որ այսօր տակաւին Հայութեան սրտին մէջ խրուած կը կենայ և արիւնը կը կոսի. թող խօսին այն հին ու նոր աղաները, արհաւիրքները, սոսկումները որոնք հրեղէն կիկոններու նման դարբերէ ի վեր մեր ազգին զլիւնը վրայէն եկեր անցեր՝ ու չորս զին զիակ ու աւերակ տարածեր են, որոնք իրենց գործած ամայութեանց վրայ յաղթական կոթողի տեղ սովի և մերկութեան ուրուակները կանգնեցուցեր են, թող խօսին բարբարոսութեան հին յիշատակները որոնք՝ արեւելեան քրիստոնէութիւնը ահապին կայսրութիւններու հետ հիմնադրուած կործանիչ, քեր տարբեր են առանց հետք մը թողելու, անգամ մի ևս թող խօսի Համիտին սուրբ՝ որ

ԸՆՏԱՆԻ ՅԱՐԿԸ

ԻՆՉ Ե ԻՆԻ

Հայաստանը որրացուց նաև իր ուսուցիչներին իր քարոզչիներին...

Հայ-Ռոզդոլսկաններու ամենէն թունդ բողոքողին հարցունքը թէ, եթէ Ամերիկայի բողոքական եկեղեցիներու ամենէն մեծը և ազատականը (օրինակի համար Պրոքթի Թէմբլի կամ Թրէմոնթ Թէմբլի Ժողովուրդը) առնենք տանինք քանից Միոյ Ալլրան գիւղին մէջ, եւ թող կէս դար, դար մը, դարեր իրենց Հայկական պատմական արհաւիրքներով զան անցնին անոնց վրայէն...

Դեպ Հայաստանայց եկեղեցիներն չլին ըրերինք այնպէս ինչպէս որ օրիորդ մը իր մօրը զէմբին խորովներուն համար քամչնար ըսելու թէ իմ մայրս է: Խորշովներս սակայն որ ստացած էր նոյն այդ օրիորդին կեանքը հրեկի բոցերուն մէջէն փրկելուն համար, խորշովներ որ իր մօրը զիւրազանութեան փառաց կերէն է ինչպէս և սիրոյն:

Տար անոյս շունկոտ որ Արթ. Պատ. Հըր պըրթ Ալլին կը յիշէ այն Ենոնդի քարոզը որ իրին կետ միասին Բայբելի Բողոքական եկեղեցւոյ բնակն լսելու դժբաղտութիւնը ունեցանք, որը այնքան ծիծաղալար թէր, որքան յիմարակամ, և անօթալի Արդ. երևակայեցէք թէ ինչ պիտի ըլլան նոյն իսկ աւետարանչական ոգիով տոգորուած եկեղեցիներ՝ երբ անոնք երկար ժամանակ այդպիսի քարոզիչներու ձեռքին տակ մնան: Ու Հայաստանայց եկեղեցիներ որ դարերով մնացած է կարծանքներու, արհաւիրքներու և տգիտութեան խոլ խաւարի տակ պահած է այնքան կենսունակութիւն որը բաւական եղած է պահել այդ եկեղեցիներն ոչ միայն բացարձակ անկախութիւնը եւ անվթար դաստիարակութիւնը, այլ զայն բարձր կեցողացած է իր ազատ և լայն ոգիով: Իր ժողովրդային կառավարութիւնով, իր այդպիսին նախատարութիւնով, առաւել զան ուրիշ որեւէ Արեւելեան եկեղեցի: Հայաստանայց եկեղեցիներ իր արեւան թաթաւ պատմութիւնովը շնորհներ թէ նա իր մէջ կեանքի ու կորովի ներհուն և անսպառ ազդեցութիւնը ունի:

Ահա այս հարցները կը դնենք ամէն խորհող Հայ բողոքականի առջև: Անգամ մի եւս կանգառաւանք արս ներթին և կը վերջացնենք:

Գ. Պ. ՉԻԹՃԱՆԻ

Շէյքսպիր, Վիլիամ Շեքսպիր, Հէնրի Պիշը, Պարսը, Վոլթեր Սթոյվ, Մասամ Տուստեմանթ և այլք, սիրոյ վրայով երենց գաղափարները հետեւեալ բանաձևերով յայտնեցին:— Սէբը հոգիին կրակն է, Սէբը բարոյական բնութեան այն է, ինչ որ է արեւը երկրին, — կեանքը ծաղիկ է եւ սէբը անոր մեղրը, — Մարդու հոգին սիրով կապրի, — Սէբը անութեան մէջ գեղեցիկ կարկառուութիւնը սիրելի է, — Սիրելի կեանքին գերագոյն հաճոյքն է, — Սէբը կնոջ առաքինութիւնն է, — Ճշմարիտ սէբը այն պարզ գեղեցիկ գոր Աստուած մարդ է կնոջ միջոցով ձեռնած է, արծաթ օղբ, ոսկի կապը՝ որոնք սիրոյ սրտի միջոցով կը կապեն հոգիներն Աւ մարմններով: Ըսած են նաև թէ, «Այն մարդը որ զինք սիրող գեղեցիկ և առաքինի կին մը ունի նա թախամաս մը ունի, որով ինք անվթարութիւն կը դառնայ, ամէն ոք կը խորհրդի թէ այդպիսի միոյն կեանքը շատ աւելի արժէք ունի քան ուրիշներունը, — Խորութեանց քանձերը այնքան թանկագին չեն՝ որքան խորհրդաւոր կանգնաւոր այն մարդուն որ բանտուած է կնոջ մը սիրուն մէջ: — Լաւ է սիրել և կորսնցուցնել՝ քան երբեք սիրած չըլլալ: — Այն սիրտը որ սիրել զիտէ, մի երկրաւոր գրախտ է: Աստուած ունի իր սրտին մէջ, զի Աստուած սէր է: — Սէբը ինքզինքը կուտայ: Չգնուիր: — Կիրքը կոյր է բայց ըսել թէ սէբը կոյր է, (կըսէ Պարսը) սխալ է, սուսն, ոչ մի բան այնքան սրտասէս է և այնքան հիւսալից որքան ճշմարիտ սէբը, որը կարծես բնագործ է, այնքան ճշգրիտ կը ճանչնայ զիմացիներն զգացունները: — Սէբը այդ մարդուն կեանքին մի մասն է: Իսկ կին մարդուն ամբողջ էութիւնը, — Ամէն ճշմարիտ սէր հիմնուած է գնահատութեան վրայ: — Ինտուստիտ սէբը լաւ է: Իսկ երբ կը տրուի զեռն չփնդուած՝ լաւագոյն է: — Կեանքի մեծագոյն երջանկութիւնը կը կայանայ այն խառնուրդութեան մէջ թէ մեծը սիրուած ենք, — կին մը որքան ալ գուռ կը կրկն կարող է հասկնալ սիրոյ մէջ ամէն բան, իսկ մարդը ինչքան ալ մտաքի լինի հագրել կէսը իմանալու կարող է, — Սէբը ու դատողութիւնը շատ անգամ կը կենդանի, ինչ երջանկութիւն է երբ անոնք բարեկամութիւն կը պահեն, — Սէբը աչքով չէ որ կը նայ՝ այլ մտքով: — որոշուած չէ թէ կինը առաւել կը սիրեն, իսկ անհրաժեշտ է որ անոնք աւելի լաւ սիրել զիտեն: — Անոնք որ ետեւէ են իրենց սէբը զիտեցնելու նուազ կը սիրեն, — Չենք կրնար զիտել թէ մէկը որքան կը սիրէ, մինչև որ գիտնանք թէ մեզի համար տառապելու որքան պատրաստակամութիւն ունի, սէբը գմարը այնքան կրնայ փոխել որ ալ անձանաչիլի դասուն: Չկրնաս կարծել թէ այն հին մարդն է: սէբը չնայանք ու թիւնը անկեղծութիւնը անկեղծ կը լինի կեանքի քանգա տառութիւնը: — կուգայ ժամանակ երբ մարդէակին հոգին (կնոջը առաւել քան այր մարդունը) կսկսուի սիրոյ (էֆէբընի) միջնորդարին համար նուազիլ, միջնորդար որը ձեռնու համար ստեղծուած է:

Այսպէս ահա աշխարհի ամենէն ըզբայուն սրտերը և ամենէն մեծ մաքուր բանական կենաց արժան նկատած են սէբը: որուն մէջէն ընթացող անձանակի հիւստիով, հոգիին կարկովն՝ եւ որուն վրայ՝ կընծիւղի, կուռնանայ և կը բարձրանայ մարդկային երջանկութիւնը: Սիրոյ արժանտին վրայ, սիրոյ հիւստիով է որ կեանքի ծառը կտտանայ իր փառայնց գոյութիւնը: Անով կարճակէ իր ուրախութեան ճիւղերն, անով դուրս կուտայ իր գուարթութեան տերեւներն, անով կը բանայ իր խանդավառութեան ծաղիկներն: անով կը թափէ իր գունդեղութեան պտուղներն, անկէ ու անով է որ յառաջ կուգայ ընտանի յարկը սաղարթագեղ: Ժողկապաճոյճ և պտղաբոյս, որուն շուքին տակ կը կանգնին գառնուկներ անոր ջրեղերուն վրայ ուստիստով կը դայայլեն ստիակներ — Հոն երջանկութեան գիտնելին իր թեւերը սաւառ:

նած կը խայտայ ամուսնական գրկախառնումի մը վերեւ, ուր հայրական գորովն և մայրական խանդազատանքն ապառաժին ծոցէն զոյգ զով ու վճիռ աղբիւրի մը պէս կը հոսին սիրազեղ սրտերէ ու չորս գին պարարտութիւն կը տարածեն: Հոն մարդկային դրախտը կը ստեղծուի:

Ահ ինչ կայ գարունին շունչին մէջ, որուն առջև ձմրան ցրտաշունչ բուքը անուշ զեփուտի կը վերածուի, որուն առջևէն կը հայածուին, կանչեցան նաև ձիւնի և սառոյցներու ձերմակ սաւաններն ու անոնց կը յաջորդեն զմարտափայլ և ծաղկաւէտ հովիտը եւ մարգագետիններ, ինչ կայ, ո՛հ ինչ գարնան շունչին մէջ, որով ձմրան մեռելաբանութեան համայն երկիրը յարութիւն կանուէ նոր կեանքի բերրացան խայտանքներով, այն նոյն հրաշալի դաղտնիքը կայ սիրոյ շունչին մէջ: Հոն վերվերոյ նայուածքով արաւկաբոց բան մը չես տեսներ, բայց անոր թաղուան աղտեցութիւնը ինչ գերբնական զօրութիւններ կը պարունակէ: — Սէբը անխորհրդի մէջ, սէբը ժպտելի մէջ, սէբը ձայնին մէջ և անա աւել պատուածներ ինչ անդէս կուգան: — սիրոյ ակնարկին առջև լեռնաբերձ, փրփրազէլ և սրտալից ալիքներ կանգ կուռնեն, կը անջին: սիրոյ ժպտելի հանդէս նախանձի, առեւտրութեան և բարկութեան լեռներ որ ապառաժներ կը փշուրին, սիրոյ ձայնը ստեղծագործ է միջոցներն ամենակարողութիւնը ունի, անիկայ խաւարէն լոյս կը ծագեցունէ: անով անդունդներ կը յարգուին, նա անձեռնութիւններ կը ձևակերպէ, անով ջուրերը ջուրերէ կը դատուին և ցամաքը կերևայ: և այդ ցամաքը երբանիկ կենաց ուսուն կը դառնայ, հոն երբեք կը կարծուին: Սէբը Մորիաֆն, Գորջի մացառէն, Սիւնէն: Սիւնէն, Գորջի մայիսի խօսող Աստուածն է: Հոգ չէ թէ ուսկից կը խօսի սէբը մացառէն, լեռան կատարէն թէ խաչի մը վրային: Հերթ է որ խօսողը սէրն է: սէբը երբ ստուռածային, նոյն արարչագործ, նոյն ամենակարող զօրութիւնը ունի անկար մանկանց անմեղունակ արտայայտութեամբ, փարկասուն կեղծ մը վարանտ ակնապիկն և պտտեալ միկին խորտա ձայնին մէջ, այս բոլորին մէջ ալ սէբը նոյնքան յաղթական է: Արդ կուգամ եզրակացունել թէ մեր ընտանի յարկերը հիմնուելու են սիրոյ վրայ: ու այն ատեն, միմիայն ատեն է որ կուենանք երջանկի ամուսնութիւն երջանկի սուս և երջանկի ընտանիք: Եթէ անիք ունենամ պիտի խօսիմ իմանալորի ամուսնական կեանքի յարաբերութիւններուն եւ ծնողներուն ու որդիական պարտականութեանց վրայով: Նազելի Պատկան

M. HARPOOTLIAN, Worcester, Mass P. O. Box 470, ՍԵՂԱՆԱՌ ՓՈՒՆ ԳՐԱՅ Տանկաստանի բոլոր քաղաքներն զբրամ կը փոխադրենք: Մեր սան կեդրոնատեղիք են Կ. Պոլսի ու Պարսերը մեծ Թարութիւն է ք. Պարսերութեան և երբարք մեծ դուռնաբով փոքր քրտ անոնքներուն մասնաւոր զեղը կընենք: Ամէն զժի վերայ նաւային տուտակ կուտանք: տուտակ ու քրամ հեռադրով կը զրկենք Մարտի 57 Hanover Street. Միհրան Պարսերութեան Ուսուր

Օգնու թիւն Մէջկերտի Երկես Դպրոցի Նամակ Երթագէտն Դպրոցական գործի յառաջադիմութեան ջանադիր երիտասարդներէ վաղուց ի վեր կայակերտուած էր ընկերութիւն մը նպատակու Տէրսմի նըման կարևոր տեղի մը միակ դպրոցին որ Մէջկերտի մէջ կը գտնուի, և ուր կուտանին այժմ 220 մանչ և 90 աղբիկ աշակերտներ: Ընկերութիւնը անցեալներ մեծ կորուստ մը ունեցաւ, իր անդամներէն մէկուն խաբարայութեան պատճառաւ որն ամբողջ դրամագլուխը կորցնելով շունչը իրուստաւ:

- Դպրոցի նիւթական անձկութիւնը ու անոր յարատուութեանը անհրաժեշտութիւնը, անիք տուին մեղ ձեռնարկելու հանգանակութեան, առաջնորդութեամբ Տիկին Կրանից Թովհանէսեանի: 140 տարը հանգանակուեցաւ վէստ Բայմէն ու շրջակայք, և 65 տար ևս Նիւտորքի Հայրենասէրներէ: Ի քաջալերութիւն աւելորդ չէր ըլլար և հրատարակել նուիրատուաց անունները, որք են՝ \$25 Ծղարք Էմիլիան \$25 ,, Մատոյեան \$12 Տիկին և Պարոն Թովհանէսեան \$10 Մ. Բարսերիկեան \$10 Գ. Ղուկասեան \$10 Պ. Ղուկասեան \$10 Մ. Թ. Գարբիէլեան \$10 Ասատուրեան \$10 Զ. Միլասեան \$ 5 Զ. Լաւանեան \$ 5 Մ. Մարտիեան \$ 5 Զ. Ալաճեան

Ենթահայկութեան արժանի են մեր Հայրենակիցները իրենց ցոյց սուած կորովին ու նուիրատուութեան համար, սակայն չմոռնանք որ Լույսի մէջն ալ կան Յէրմիներ, որսեր ոչ մի ձայն ոչ մի մասնակցութիւն չունեցան, և ներքին է: կերևի թղթատաղէն աչք չեն բանար: Ներկայ օրինակը բաւ չէ՞ զիրենք արթնցնելու:

Մեզկերտի ՍԻՐԱՆԻՆՈՍ ԼՍՄԱՌՈՐ Սէր համարերք՝ մի մանիշակ Ու նոյն ատեն դարձաւ ձերմակ: Անցրիկ մ՝ դիտելու, Զարմանք նա դեռ Երէկ տեսայ կաւ կապտոյտ էր: Ո՛հ սէր իմ այդ նայուածքիդ տակ Ամէն կապտոյտ (\*) դառնայ պիտակ: Այսօր ալ ես պապի իմ սէր Գտայ թարցուեք մ՛հոն պահուած էր Իսկ չպապի շրթներն՝ որ զոյգ Սեպուէի, կամ յախշտակոյ: Ուր հալմ եկեր ու խաղցեր էր, Գանգաւրը անվար վերցունցի վերջ: Գոն պահել համարում՝ ո՛հ սէր!:

(\*) Անգլիարէնի մէջ կապտոյտ մեղամաղձատուութիւն կը նշանակէ փոխարեութեամբ: Թարգմանք Բնասարկ Մանկաստան

ՄԻԼԻՆՆԵՐՈՒ ՆՈՐ ԱՂՔԻՒՄ Կովկասայց Զեռքը Ոսկեհանքեր Կովկասի մէջ Մոսկովսքի վեդոմոստի թիւթը իր վերին թիւերէն մէկուն մէջ կը հրատարակէ Բագուէն գրկուած հետեւեալ Հետաքրքրաւոր թղթակցութիւնը: Միջին Հիւսիս Կովկասի հանքային նշանաւոր Հարստութիւնը նախընթաց (քարիւղ), կը կայմէր որուն արտադրութիւնը աւելնալով արուէ տարի վերջերս հասեր էր արտադրանքի 600 միլիոն ռուբլի նշանաւոր գումարի մը: Այս պատճառաւ Կովկասը կատուանէին «նախընթաց» Բայց Հիւսիս կը պատաստուէր ոչ միայն նախընթաց այլ իսկական Ռուսիէ Բայթիֆօնիս գառնալ, վաստն զի իր մէջ կը պարունակէ երբ նախ թի շափ առատութեամբ ոսկի: Սոյն ոսկին երևան ելած է Եամախի քաղաքի մօտ մէկ քանի տեղեր: Առաջինը գտեր է Հայ անտառապալ մը որ հաւաքելով քիչ մը այդ կարծիքաւոր հոգիէն կը զրկէ Բագու իր մէկ ծանօթ Հայուն որ կը լուսայ դայն և կը գտնէ զուտ ոսկի բաւական քանակութեամբ: Անտառապալը առանց ժամանակ կոսնցունելու կիմացնէ կառավարութեան \* ու ինքք փեթապուրկ կը վազէ բրած դիւար քնուութեան ենթարկելու համար: Այս լուրը արտաութեամբ կը տարածուի ամբողջ Եամախի ու Բագուի մէջ, նախընթացի կրտսններն ալ իրար

(\*) Ռուսական օրէնքով, ամէն հանքային գիւտ մը ընող, ինչ որ ալ ըլլայ այդ հանքը, երբ նա առաջինը կը լուսայ կառավարութեանէ վկայական կտտանայ եւ լիակատար սեպակաւանտէրը կը լուսայ գտնուած հանքին:

կանցնին լսելով որ իրենց մօտ միջոցներ կան պահուած. որոնց կարելի է տիրանալ և ունեցածներն աւելցնել:

Հիմա Շամալը լեցուն է սակի փնտրողներով: Չորս պարսիկներ ալ յաջողեցան քաղաքին մօտ սակի հետքեր գտնել և ներկայացուցին կառավարութեան:

Այդ պալաքայ միջոցներ պարսիկները անտառապալ Հայուն օրինակին հետեւելով կառավարութեան վկայական և արտօնութիւն ստացան:

Այդ դերին է երեւակայի թէ ինչ իրարանցում պատճառեց այս երկրորդ գիւտին լուրը. որով կը հաստատուէր երկիրը իր ծոցին մէջ կը պարունակէր ամբողջ սակի հանքեր որոնք մինչեւ այսօր անծանօթ Քաջած էին:

Հիմա ամբողջ խօսակցութեան առարկան թէ Բազուի և թէ Կովկասի մէջ այդ հանքերն են. և ամէն կողմէ մարդիկ կը թափին Շամալս:

Ռուս թերթը ցաւ կը յայտնէ (և ասիկա զարմանալի չէ. քանի որ Ռուս է գործը) այդ հարուստ արգիւնաբերութիւնը կրկին կանցնի Հայերուն և օտարներուն ձեռքը:

ՄԵՆ ԳՈՐԾՆԵՐԸ

Ամերիկայի անխահանքերու գործարարներէն իր 150,000 հոգի գործադուլը բռն է: Ասոնք որոշած են կամ յաջողիլ իրենց պահանջները լսելի ընել տալու մէջ և կամ անօթի մեռնիլ: Կը վարսուցուի որ ծանր դէպքեր, ընդհարումներ տեղի ունենան գործարարներու և զինուորներու միջեւ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մեծ-Հայքէն հունձքի վրայով եկած լուրերը խիստ ուրախարի են. բերքերը արտասովոր կերպով առատ են այս տարի: Մինչդեռ քակի մը ամիս առաջ քօտ մը ցորեն 20 դահակաւի կը ծախուէր, նոյնը այժմ կարծէ: 4 դահակաւ:

Վեհահառա Հայրապետը բոլոր Ռուսաստանի առաջնորդաց հրամայել է որ իրենց թիւմերուն մէջ հանգուցեալ Պ. Ջանչեանցի հոգւոյն համար հոգեհանգրտեան պաշտօն կատարուի: Ամսոյս 28 ին բոլոր եկեղեցիներուն մէջ կատարուէր է հոգեհանգրտեան պաշտօնը որուն ներկայ գտնուէր են հայ և ռուս պաշտօնեաներ. և այս առթիւ ուրախութեամբ կրկնացուի թէ Պ. Ջանչեանցի հիմնած որանոցներու խնամքները չդադրելու համար մասնաւոր խնամակալութիւն մը պիտի հաստատուի Բեթլեհեմի, Մոսկուայի և Տփղիսի մէջ քանի բարեպետ անձնաւորութեանց որոշումովը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՆՑՆԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ՏՆՈՒՐ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սալմաստ 1900 Յունիս 18ին.

Չորս տարին անցաւ այն ողբալի հրաժեշտներին, որ կոտորածներն և անկումներն պատճառով ազգին կարեւոր, թարմ և ստուար մի մասն ստիպուեցաւ աղետար յարող հեռանալ իր պաշտնի Հայրենիքից: Որպէս վասպուրականցի մի անհատ՝ երբէք չեմ կարող մտանալ այն օրը և այն պահը, յորում փոխանակ Վայ-վայ թաւալին: Ծահ-Բաղի գիւղի մի արտում հաւաքուել էինք Պարսկաստանի վրայով Ռուսաստան մեկնելու. ուր մի առատագրութ հայր իւր միամօր զաւակին բաժնուելու պահուն աղետար վայնառուններով հոգեւրի մէջն էր թաւալում, բռունցքներով զինն հարուածներ էր տալիս և ի զուրթ էր շարժում նոյն իսկ հանդիսատես թիւրքերին: Սրտածովի մի տեսարան

(\*) Աւանգ զիւրի հիւսիսային կողմում մի արտ է. ուր հաւաքվում են 4. Պոլիս պանդխտութեան զինուորները միասին մեկնելու. սիրելիներից բաժանման պահուն լաց ու կոճի պատճառով Վայ-Վայ թաւալում է անուանուել տեղացի ժողովուրդից:

Հանգուցեալ Պ. Գրիգոր Ջանչեանցի յուզարկաւորութիւնը Յունիս 21ին մեծ շքով անելի ունեցել է Մոսկուայի մէջ: Դագաղը 80 է աւելի պահանքով ծածկուած է եղեր, որոնց մէջէն մասնաւորապէս կը յիշուին Մոսկուայի դատական պաշտօնական, յետոյ Մոսկուայի, Բեթլեհեմի և Աստրախանի Հայ հասարակութեանց ծանրագին պահները և ուրիշ թէ Ռուս և թէ Հայ կարեւոր հաստատութիւններու և անձնաւորութեանց պահները:

Դագաղը եկեղեցիէն հանուելով իր համակրողները զայն ձեռքերուն վրայ բռնած տարեր են մինչև Լազարեան ձեմարանին առաջը ուր հանգուցեալը առած էր իր նախնական ուսումը և անկեց ալ Ռուսի վեճամտութիւններ իւրմբազարատան գրան առիւ ուր հոգեհանգրտեան պաշտօն կատարուէր է:

Հանգուցեալին մարմինը ամփոփուէր է անդույն Հայոց գերեզմանատունը, ուր թէ Ռուսներէն և թէ Հայերէն բազմաթիւ դամբանականներ խօսեր են:

Ռուս լրագրողները կը յայտնեն թէ Պ. Ջանչեանցի մահուան առթիւ Ռուսաստանի ամեն կողմերէն և մինչև իսկ Ճինլանտիան ցաւակցական հեռագիրներ հասած են իր համակրողներուն և և եղբորը:

Իտալիոյ Մարկարիա մայր թագուհին ամսոյս 16 ին (Ը. Ե. Ա) Վենետիկի Մըլիթարեանց վաքին մէջ հանգուցեալ Ումպերթօ թագաւորին համար կատարուած հոգեհանգրտեան պատարագին ներկայ գտնուէր է:

Թագուհին Վենետիկ հասնելուն երկրորդ օրը միայն ունկնդրութիւն շնորհէր է, Վենետիկի Մըլիթարեանց Արքահայր Կիւրեղեան Արքեպիսկոպոսին, որ անձամբ վեհ. Թագուհին յայտնէր է համայն միաբանութեան ցաւակցութիւնը: Իւ այդ ունկնդրութեան միջոցին Թագուհին անձամբ փախաբաժ է որ իր սիրած Մըլիթարեան մեծանախնին մէջ հոգեհանգրտեան պատարագ մը ըլլայ իր ողբացիլ ամուսնոյն համար:

Հոգեհանգրտեան արարողութեան վերջը, Բազմազգի խմբակը Հայր երեմեան թագուհին նուիրել է Բազմազգի Օղոստոսի թիւը որուն մէջ պատշաճօրէն նկարագրած է եղեր Իտալիոյ մեծ սուզը և դրուած է հանգուցեալ թագաւորին, Մարկարիա թագուհին, և արդի Վիգթօր Էմմանուէլի. թագաւորին ու էլէնա թագուհին պատկերները և թագուհին իր ամուսնոյն համար շարադրած արթօքին Հայերէն թարգմանութիւնը:

Թագուհին ի տես այս նուէրին խորապէս յուզուած լայով շնորհակալ եղեր է երեմեան հօր և Միաբանութեան:

էր, որով լաց էին լինում ամենէն քարասիրտներն անգամ: Այս Բ. կարաւանն էր, որ կոտորածից յետոյ մեկնում վանքի իւր ձեթկիկ ձաքերաց պարուսալը ձարելու, որոց բախտին վիճակակից էին մի վարդապետ և երկու Բահանայ: Այս բաժանումը նման չէր սովորական բաժանումներին. բաժանուողները այն համոզումն ունէին թէ իրենց սիրելեաց դժոխային գերեզմանոցումն էին թողնուած, իսկ իրենքը դէպի կորուստը, դէպի իմացեալ մահը: Մեզ ուղեկից էր վանայ նախկին Պարսկաստանի հիւպատոսը՝ Հայասէր Միրզէ Հիւսէն Սանը, իւր պահապան զօրքերով. կարավանի թիւը 40 չէր անցնէր, բայց ամէն ոք շտապում էր ճանապարհին ետ չի մնալ պահապան հրեշտակի պաշտօն ունեցող հիւպատոսից, առանց նկատելու թէ փոքրիկ հետեւակներ ու ընտանիքներ կային մեզ հետ, որոնք անտանիքի դրութեան դատապարտուած հոտուում էին սրարաւ կարաւանին. հակառակ մեր յորդորներին և ընկալիչական օրէնքին, ձիււորները մի ժամու ճանապարհ առաջ էին անցնում, բացի երկու աղիւ երիտասարդներից, որոնք միտ հսկում էին ետ մնացողները վրայ, շատ անգամ ձիւրներն ետ մնացողներն տայով, հակառակ պարսիկ ձիւրակների կծու հայհոյանքներին ու թակոցներին: Ժողովուրդի այս անկարգ ու անսանելի ճամբորդութիւնը ստիպեց ինձ ինքնահրաւէր կառավարիչ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐԱՆՍԿԱՆԱԿ

Թրանսկանայ կցուեցաւ Բրիտանական կայսրութեան, պաշտօնական յայտարարութիւնով: Այս քանի շաբաթներու մէջ Անգլ. բանակը նորանոր յաջողութիւններով շատ յառաջ խաղաց, եւ այժմ կը կենայ Պոէրներու գրեթէ վերջին ապաստանին վրայ: Նախ Գրուելէր երկիրը ձգեց հեռացաւ, շատ մը Պոէր հրամանատարներ անձնատուր եղան, կըստի թէ Ընդհ. հրամանատար Ջօր. Պօթա և ս յանձնուէր է:

ՍՈՒՂԱՆՆԻ ԱՆ ՑԱՆԿԻՆ ՄԵՋ Է Կ. Պօլսոյ իտալական դեսպանը Սուլթանին ներկայացուցած է Հոսովի Ոստիկանութեան կողմանէ դրուած տոմս մը ուր կը ըսուի թէ անիթիանականները իրենց սպաննել որոշած միակետներուն ցանկին մէջ դրած են Սուլթանին անունն ալ:

Այս զեկուցումը պատճառ տուած է Սուլթանի կողմէն հրամայուած այն հակա իտալական վարմունքներուն որ ի գործ կը դրուի:

ԹՈՒՐԳԻԱ

Սեպտ. 12 ին Կ. Պօլսէն Լօնտօն թայմըզի կը հեռագրուի թէ հոն մեծ թուով ձերբակալութիւններ տեղի ունեցեր են: Ձերբակալուածները կամբաստանուին իբր Յոյն յեղափոխականներ Վիճիկէ Հէթիբիսի անդամներ: Յուսուած դեսպանատուները բողոքներ է այս ձերբակալութեանց դէմ:

Տիգրանակերտի մէջ ձերբակալուած ու բանտարկուած են երկու Գերմանացի ճամբորդներ. Գերմանիոյ դեսպանը բողոքներ է պահանջէր որ այդ ճամբորդը անմիջապէս ազատ արձակուին:

Հայֆաի մէջ (Սուրիա) Պապական Սիւրիացիներու և Գերման գաղթականներու միջև ծանր խռովութիւններ պատահեցին: Տեղւոյն Գայմագամը և կարգ մը պաշտօնակալներ Սիւրիացիները կը պաշտպանեն, որոնք եղած են նախայարձակ. և անոնց ձերբակալուելու արգելք կըլլան: Սիւրիաի և Պէրսիայի վայրերը Հայֆա կերթան նախազանգուտ այն ժողովին որ քննութիւն պիտի բանայ: Գերման գաղթականները պաշտպանուելու համար գորքերով պաշարուած են: Կ. Պօլսոյ երկիրը կը պատի մեծ Սեպտ. 23ին ցոյց մը տեղի պիտի ունենայ, ատոր համար զգուշութիւններ ձեռք առնուած են և զիւրերը հեծեալ զինուորներ պիտի շնչեն փողոցները:

Սեպտ. 11ի գիւշերը խաֆիաներ Բերտի մէջ տուել կը կրկնեն և շատ մը թուլութիւն ձեռք կը բերեն: Իր թէ Ա. Լիքսան կարապետեան անուամբ Հնչակեան մը Պօլսոյ մտած է, ոստիկանութիւնը կը փնտնէ զայն, որուն ուր ըլլալը անյայտ է:

դառնալ մի օրից՝ վերջ. թէ և առանց նորան էլ մեր յարգելի ուղեկիցներ ու հայրերը հնազանդում էին ինձ որպէս փորձառու մի անձնաւորութեան, բայց այս անգամ աւելի պաշտօնական վերածելով հրահանգներս վսեմ հիւպատոսի հրամանների համաձայն:

Պէտք է խոստովանել թէ հիւպատոսը ինքն էլ մեր խաղաղ և անցնում և մերթ ետեւ էր մնում ու սիրա էր տալիս մեզ որ երկիրը չը կրկնու, սակայն հեծեալ թուրք զօրքերու ձեռք միշտ առաջ էին գնում, որով պարտաւորում էր և ինքը (հիւպատոս) չը բաժնուիլ զօրքից: Երբունի Հայր Սուրբն էլ հակառակ իւր քարոզներին աւելի առաջ էր անցնում, խեղճը մի անգամ տեսել էր քայլի աչքը վարազայ վանքում: Վիճակակից տէր հայրերից մինը իւր նստած իշու և միւսն իւր փոքրիկ երախտների ձեռք փորձանք էին ընկել: Ես ի զօր էի որոտում որ կարգ պահէ կարավան. շատ տեղամ երկիրը մտանալ էր տալիս անձնային ինչ- Անով ու զողով աւերակ և ամայի հայոց զիւրերից և արիւնարբու վրանաբանակ քիւրտերի միջից անցանելով՝ երբ օրից վերջ արտատուր հասնեց Պարսկաստանի Գոթուա գիւղ: Մեր ամենուս երկիրը աւելի բազմապատկուած էր ճանապարհին քիւրտերի իրենց պատմած ահուկ արարքներից. որոնք

Գաղաքական ծառայութեանց յատկացուած ահաբեկ գումար մը անբերութեանց է, այն հաւատքը կը տիրէ թէ, այդ գումարը պալատը վերցուցեր է, իշխանուհի Ջէլիէի հարսանեաց և իշխան Պըրհոնեստինի թլփատութեան ծախքերը հոգալու համար:

Մէհմետ Ալի փաշան Սուլթանին կամ քին հակառակ կարմիր Սաշի Ընկերութիւնը կազմած ու ինքը անոր նախադասութիւնը ստանձնած ըլլալուն համար՝ Սէրասքերի դուռ բանտարկուած կը մնայ և անկէ պիտի դրուի Սիւրիա իբր Դամասկոս—Մէքքէ երկաթուղին քննիչ:

Վանի Անգլ. հիւպատոսը հեռագրեր է թէ իր վրայ յարձակող քիւրտերէն Յ հոգի ձերբակալուէր Վան կը տարուին, որոնք ձեռք բերելու համար բաւական քիւրտեր սպանուէր են:

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԸ

Ամառը որ անցաւ հանգստեան առիթ չտուաւ յոգնած քաղաքագէտներու: Չինացիները կերելի թէ այնքան քաղաքակրթուած Չին որ սաք օրերու վաղանձայի յարգը գիտնալով՝ քաղաքական խռովութիւններ, յեղափոխութիւն և կոտորած միայն ամիսներուն թողուն որպէս գի մեծ քաղաքական հանձարները այն ատեն կարող ըլլան լուրջ դատողութեամբ շարիքներու դարմանը որոշիլ: Չարմանալի չէ սերնին որ ծայրագոյն Արեւելից կնճռոտ խնդրոյ լուծումը դեռ շատ ձգձգուի:

Անհաւանական չէ որ այսօր փողոցն անկիւնը, սրճարանը կամ ճաշարանի մը սեղանին ջով կան մարդիկ որ ամենէն սոսկալի տաքութեան տակ ալ կրնան Չինական, թրքական, Եգիպտական կամ ուրիշ ու է խնդիր քանը մը վայրկեանէն լուծել, բայց դժբաղդար կառավարութեանց զեկը իրենց ձեռք բռնող մարդիկ զուրկ են ասոնց երկնատուր ձիրքէն, կրիսի դանդաղութեամբ կը շարժին հակառակ մեր յարաւուն անհամբերութեան:

Ամիսներ անցան այն օրէն երբ Գերմանական կատաղի կայսեր դեսպանը Փէքին փողոցները ներկեց իր արեւնով, երբ Չինացիք յանդուեցան հիւսիսային արջին սահմանը անցնել, Ֆրանսացի ուղղափառ միսիոնարներ մորթել, անգլիացի և ամերիկացի քրիստոնեայ քաղաքները շարժարեւ, կոտորել և աւելի ալ: Գաղաքակրթ պետութեանց դեսպանները հրաշքով միայն ազատեցան անդուր մահէ: Ամեն չինաստանի վերջը եկաւ, ըսինք:

Եւրոպական և Ամերիկեան միացեալ դաշնակից բանակ մը կատաղի դիմադրութեան յաղթելով Փէքին գրաւեց, սակայն շարաթներ կանցնին, և Եկայսե-

ցոյց էին տալիս մեզ զիւսային ժպիտներով իրենց հերոսութիւնները՝ դէպի պարսկաստան փախչող զինուած և անգէն երիտասարդներու վրայ ի գործ դնող ձեռքերով քիւրտերի պատմածները. թէ ինչպէս ողջ ողջ վառել էին շատերին, որոց աճիւնները դեռ մնում էին դաշտերում: Յոյց էին տալիս Սաքայ կոչուած աւանի արեւմտեան կողմում մի բլուր, որին կարծում եմ՝ Բեհաբը-դաղի էին անուանում. այն տեղը՝ 300ից աւելի երիտասարդների սպիտակ մընում էին մինչև այն օրերը արևու առջևը բայց և այնպէս զարմանում էին քաղերի կոռէի մասին: Ինչպէս քիւրտերն իրենք պատմում էին, թշուառ երիտակարդները ծարուելից աւելի թուլացել էին, շատերի փորերը ձեղքած լինելով՝ խոտ էին դուրս բերել. Ե՛հ սարսուռ է մարդս ու չի կարող շարունակել պատմութեան շարքը: Որովհետև քիւրտերից շատ նշանաւորները նոյն տեղերում սպաննուել էին, նորա համար էլ զայրութիւն կատաղութեան էր հասել, հէնց պատմութիւններս շարունակած միջոցին յայտնապէս երևում էր, որ ուղում էին պատմութեան խոլիտից մեզ, որոյ համար էլ չէինք ուղեր մի թոգաչափ անգամ հեռու մնալ ճանապարհին հիւպատոսից ու զինքը շրջապատող զօրքերից:

ԹՂՈՒԿԻԹ

Շարունակելի

րուծեան ամբողջութիւնն, «բաց դուռ»  
«ազատ վաճառակառութիւնն» ասոնք են  
մինչև հիմա լուսաւորեցող, ժամանակին  
մենք կը հաստատայինք թէ եթէ Հայկա-  
կան շարժերու ժամանակ մի քանի Եւ-  
րոպացիներ կամ նոյն իսկ Ամերիկացի մի-  
սիոններն ալ զոչ գացած լինէին թուր-  
քերու գաղանթեան Եւրոպան անպատ-  
ճառ պիտի միջամտէր վարկեանսպէս. և  
մեր դատը պիտի շահէինք...

Չինական և Թրքական հարցերու մէջ  
չատ մօտ նմանութիւն կայ՝ կան երկու-  
քէն ալ հասարակ կարևոր պարագաներ  
որոց ազատութիւն կարծէ տալ, մասնա-  
ւորապէս փափաքելի էր մեր յեղափո-  
խականներուն քիչ մը դիտել Եւրոպա-  
կան քաղաքականութիւնը ծայրագոյն  
Արևելից գործին մէջ, պայմանաւ ան-  
շուշտ որ մեր բարեկամները հայհոյելէ,  
կամ զիրար նախատելէ վերջ ժամանակ  
գտնեն այս նպատակին յատկացնելու:

Հասարակ դիրքով մը բոլոր Չինացի-  
ները նոյն կերպին, մէկը միւսէն զա-  
նազանութիւն չունին, թերևս նոյնը կը  
խորհին Չինացիք Եւրոպացոց նկատմամբ  
բայց իրողութիւնը այն է թէ Չինաստա-  
նը բողոքացող տարրերը իրարմէ խիստ  
զանազան են չեղով լեզուով, կրօնով, ա-  
ւանդութեամբ տարբեր տարբեր հա-  
սարակութիւններ իրարու միացած են  
Մանչուրեան կայսրութեան տակ: Մարդ-  
կային այս հակա զանգուածը իր ամ-  
բողջութեան մէջ կը պահեն մանու-  
րիկները, ուսեալ դասակարգը, որոնց  
մեծքն են կառավարական և կրօնական  
բարձր պաշտօններն և անսահման ընկեր-  
կան ազդեցութիւն: Հիւսիսային Չինաս-  
տանը թափար արիւն ունի խտնուած  
իր մէջ, Հարաւայինը Մալայեան, միջին  
կամ բուն չինաստանը կը կերտնացնէ  
իր մէջ ազգային ամէն աւանդութիւն-  
նակայն ամէն դասակարգէ, ամէն աս-  
տիճանէ և գաւառէ յառաջ կուգան ու-  
նայնքը որ աստիճանէ աստիճան բարձ-  
րանալով կընդարձակեն իրենց ազդեցու-  
թիւնը, ամէնը միասին իրենց մէջ ու-  
նենալով սերտ կապակցութիւն ինչպէս  
վանական կամ կրօնական հաստատու-  
թիւն մը. կամ թուրքոյ ուլեմաները:

Այս դասակարգին վերաբերող անձինք  
մեծ դեր կը կատարեն Չինաստանի վեր-  
ջին դէպքերու միջոցին, դեր մը որ շատ  
աւելի մտք և անհասկանալի է քան Պօք-  
սըները յայտնի գործունէութիւն որոց  
ետե և կը պահուի իրական ուժը, ինչպէս  
Թուրքոյ պաշտպանութեան անձինք  
կը տեսնենք մոլեռանդ խլամ կրօնաւո-  
րը:

Թուրքոյ և չինաստանի նմանութիւ-  
նը միայն իրենց ընկերական և քաղա-  
կան կազմութիւն մը չէ, երկուքին ալ  
տիրող գերդաստանները նոյն շնորհալի  
արմատէն կուգան: Կայսրուհին Համի-  
տի հորաքոյրն է, երկուքն ալ նոյն թա-  
փարական հակուած ունին: Լէնկիմուր-  
ներու, ձինկիզխաններու ծնունդ առող  
թափար ցեղը այսօր ալ նոյն կարգի բա-  
րի պտուղներ կուտայ աշխարհի:

Չինաստանի վերջին քանի տարիներ-  
ու պատմութիւնը զարմանալի կերպով  
կը համաձայնի թուրքոյ պատմութեան.  
Ճարտական պատերազմը Ռուս-թրքա-  
կան պատերազմին տեղը կը բռնէ: Պար-  
տութեան վերջ ամբողջ կայսրութիւ-  
նը յետադիմութեան շրջան մը մտաւ,  
օտարականաց և նորութեան դէմ ատե-  
լութիւնը. գազաթնակէտին հասաւ, փա-  
խստական բարեկարգչները հազիւ շուշ  
կանէին ծաբոն կամ Սենկոսիար, Չի-  
նաստանի երիտասարդ թուրքերն էին որ  
երբ հեռուէն կը խօսէին, երկիրը գահա-  
վիժին կը մտնեար: Նախապաշարեալ  
ներմիտ և կոյր քաղաքականութիւն մը  
չատ Թանր աշխատութեամբ ձեռք բե-  
րած արդիւնքը կոչնչացնէր, թաղուհ-  
ւոյն պալատը յառաջդիմութեան և ա-  
զատական զաղափարներու երդուեալ  
թշնամին մահ կը նիւթէր այն ճամբուն  
դէմ որ Չինաստանի կեանք պիտի բերէ-  
ին: Կառավարութեան թոյլութեամբ և  
եղբայրն աշխատութեամբ յառաջ կա-  
տարական Փրօփականտան, արիւնհե-  
ղութեան և կոտորածի դէնքերը պատ-  
րաստուեցան և երբ ոճերէն ետքը կհա-  
ղատաստանի օրը, տգէտ և անմիտ Չի-  
նաստանը դատաւորներուն մէջ տեսաւ

իր երբեմնի անհաշտ թշնամիները որոնց  
ձեռքը ինք զինք տուած էր:  
Ինչ պիտի ընեն քաղաքակիրթ պե-  
տութիւններն չինաստանին, հարցում մը  
որ ամենէն մեծ անձկութեամբ կը հար-  
ցընենք մենք Հայերս ամենուն հետ, ո-  
րովհետեւ այս հարցին պատասխանէն պի-  
տի կրնանք հասկնալ թէ սպագային ինչ-  
պէս պիտի վարուին և թուրքոյ հետ:  
Գերմանական դաւեւտաթերթ մը պատ-  
կեր մը հրատարակած է որ շատ գեղեցիկ  
և բացատրիչ է: Հիւանդանոցի անկողնի  
մը մէջ զով զով պառկած են թուրքն  
ու չինացին, դռնէն ներս կուգան վիրա-  
բոյժները, դանակներով սղոցներով և  
անդամահատութեան ուրիշ գործիքնե-  
րով զինեալ: Չինացին անհիշելի աչ-  
քերը և բերանը լայն բացած կարծես  
սարսափէն պիտի դիւահարի: Մի վախ-  
նար բարեկամ, կըսէ դրացի թուրքը,  
ես տարիներէ ի վեր հոս եմ, բայց կատա-  
րելապէս առողջ եմ: Վիրաբոյժները երբ  
գործի սկսին միւս հիւանդն ալ պիտի  
յիշեն արդեօք:

Պետութեանց համաձայնութիւնը բը  
նական է որ շատ դանդաղ գործէ, խնդ-  
րոյն գիտնորական մասը Գերմանացի  
ընդհ. հրամանատարին հասնելէն շատ ա-  
ռաջ կարգադրուեցաւ, բայց մնացած  
քաղաքական և կնճռոտ մասը փնքիւնէ  
Եւրոպա փոխադրուեցաւ. Փեթրպուրդի,  
Լոնտոն և Պերլին կը բանակցին իրարու  
հետ: Երբ նկատի առնենք տարբեր ազ-  
գերու ներկայ շահերը, կայսրութեան  
հակադէմ ծաւալը, խնդրոյն անսահման  
կարևորութիւնը և Սերի և առհասարակ  
քաղաքակիրթութեան վրայ ունենալիք  
անընթաց ազդեցութիւնը մենք ալ պիտի  
չզարմանանք Անգլիայի խմբագրին հետ  
եթէ չինական խնդիրը դեռ 5-6 ամիս  
զբաղեցնէ Եւրոպան:

### ԱՆՍ.ՀԻՏ

Հանդէս Աղբային, Գրական և Գե-  
ղարուեստական. բացուած է Բրք. տար-  
ուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ  
ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ  
6 Place de L'odeon Paris

Բ Ա Ֆ Յ Ի Ի  
« ԴԱԻԻԹ-ԲԷԿ » Ա. Բ. Կ Հատոր վեր-  
ջարանով և « ԿՍՏՄԵՐ » Բ. Հատոր լի-  
պատով:

Իւրաքանչիւրի բաժանորդագրին է  
5 Շիլին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ըն-  
թացքում և անմիջապէս կուղարկուին  
բաժանորդներին Շորպէս « ՍԱՄՈՒԷԼ »  
եղաւ:

Բաժնի միւս երկերը ունենալ ցան-  
կացողները պիտի ուղղակի դիմեն մեզ:  
Մեզինք կարելի է ստանալ նաև Խրիմ  
եան Հայրիկի, Մերենցի, Պետրոս Դուր-  
եանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ:  
Հասցէ.

MME. RAFFI,  
47 Uxbridge Road,  
London, W., England.

### ԿՈՒՉԷՔ ԿԱՆՈՒՍԵ ԳՆԵԼ

Անոք որ քաղաքին մէջ կամ քաղա-  
քէն դուրս որ և է կալուած գնել կու-  
ղեն թող դիմեն հետեւեալ Հասցէին մի-  
նորդ արտի և տան վաճառումի:

J. H. DONELLY,  
REAL ESTATE  
City and Country Property,  
Room 37

476 Main St., Worcester, Mass.

Նմուշի համար հետեւեալ օրինակը  
կուտանք—  
1600 տօլարի, դիւրին պայմաններով  
Ուստի մօտերը կ'առուած մը կը ծախուի  
որ ունի երկու. երկ յարկանի տունը  
ախոս մը, մեծ կանոց մը, բոլոր շէն-  
քերուն մէջ վազուկ ջուր. 16 դուրս  
տալար պահելու խոտ, 460 քօտ փայտ,  
100000 ոտնաչափ տեղի վրայ ատող ձե-  
ղէն և այլն և այլն:

ԿԱՐՆԻՈՐ ԱՉԴ  
Տողթար Հ. Ս. ձէլալեան, կառավա-  
րութեան վկայեալ բժիշկ, իւր օֆիսին  
մէջ կը գտնուի  
Կէս օրին 12 է մինչև 1.  
Գիշերները 7 է մինչև 9.  
Եւ պատրաստ է իրեն դիմող հիւանդ-  
ազգայինները ամենայն խնամօք դար-  
մանել:  
Հասցէն է  
DR. H. S. JELALIAN,  
11 Dartmont St., BOSTON.

ԳՐԱՎԱՅԱԿ  
ԳՈՐԾԱԿԱԼ  
Կուգամ ներողութիւն խնդրել ամէն  
անոնցմէ որք կամ Հարցեր և կամ յանձ-  
րարութիւններ ուղղած են մեզ իսկ մենք  
մեր անձնական գործերու տեսն մը չա-  
փազանց խնդրեալ ըլլալուն պատճառաւ  
անոնց պատասխանած չենք: Այժմ որ  
գօտարութիւններէ ազատած ու գործե-  
րը ըստ ամենայնի կ'անուարարած եմ.  
ապահովաբար կրնամ ըսել թէ յետ այ-  
սու մեքենական կանխաւարութեամբ  
իմ գործակալական պարտականութիւն-  
ներս պիտի կատարեմ: Կարգ մը գլը-  
հունց յանձնարարութիւնը ուշանալուն  
մասնաւոր պատճառ եղաւ վենետիկէն  
զրկուած սնունդի մը դարտուղիով ա-  
տեն մը կորսուած մնալը: Կը խնդրենք  
որ մեզի դիմողները հաճին իրենց հաս-  
ցէները յստակ ու բոլոր գրել, երբեմն  
հասցէներ բրէքք չեն կարդացորի: Կը  
կրկենք թէ մեր Գրավաճառական գոր-  
ծակալութիւնը կը շարունակենք կապ  
ունենալով թէ թիւրքոյ թէ Ռուսիոյ  
և թէ Եւրոպայի բոլոր հայ տպարաննե-  
րու հետ:  
Ըստանձնած եմ նաև Կրաւուքի գոր-  
ծակալութիւնը. ամէն անոնք որ կը փա-  
փաքին կամ հատուկ և կամ տարեկանով  
վերաւուքը ստանալ, կրնան դիմել ինձի  
դրամը կրնաք գրել Մեր Օրոտով:  
Յ. Պետրեան

Անձնապէս դիմել ուղղուները կրնան  
գալ 29 Կօրհամ Փողոց  
Նամակի Հասցէն է.  
390 P. O. BOX  
LOWELL MASS

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Յ Ա Ի  
ՄԵՆԱՐԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ  
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՅԵԱՆ  
Նիւ-Եորք 609 2րդ. Ավիւնօ

Տեղական և Արեւելեան բազմատե-  
նակ նպարեղները, լաւագոյն տեսակ  
ընդեղները, եղանակին համեմատ բան-  
ջարեղները և առօրեայ թարմ միս: Հայ  
կական պանիր փառուտը 14 սէնթ, մեծա  
քանակ գնողաց 13 սէնթ. Ուստի պա-  
տուական Պլուր և Մեծած փառուտը 4  
սէնթի մեծաքանակ գնողաց զեղջ կրնենք  
Ձեթապտուղ (զէյթուն) փառուտը 10 ս.  
մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղջ  
կրնեմ, 5 փառուտի քէն սալար հատը 25  
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հա,  
տը: Մեր քով միւս պատրաստ կայ  
Հայկական ամեն տեսակ սպորտներ, ա-  
ղը դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ,  
անթապ հալվախի, կանտնջ զէյթուն.  
Ձէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա-  
քառնի լօքում տեսակներովը, ոսպ աղ-  
ցուած կամ չաղցուած, սուսախ, սիսեռ  
Պօլոյ խաչար պանիր, լէպլէպի շաքա-  
րի տեսակներով, քիմիոն, անասն, պատ-  
տական իտուկ. աղւոր ալիւրէ հաց  
2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե-  
ղած յանձնարարութիւնք փութով և քիչ  
վարձով կը կատարենք մեր յատուկ  
կառքով: վճարու մեքենայ կանխիկ են և ոչ  
ապառեկ:



Ն Ա Ր Ա Վ Ա Յ Ա Ի  
ՄԵՆԱՐԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ  
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՅԵԱՆ  
Նիւ-Եորք 609 2րդ. Ավիւնօ

Տեղական և Արեւելեան բազմատե-  
նակ նպարեղները, լաւագոյն տեսակ  
ընդեղները, եղանակին համեմատ բան-  
ջարեղները և առօրեայ թարմ միս: Հայ  
կական պանիր փառուտը 14 սէնթ, մեծա  
քանակ գնողաց 13 սէնթ. Ուստի պա-  
տուական Պլուր և Մեծած փառուտը 4  
սէնթի մեծաքանակ գնողաց զեղջ կրնենք  
Ձեթապտուղ (զէյթուն) փառուտը 10 ս.  
մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղջ  
կրնեմ, 5 փառուտի քէն սալար հատը 25  
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հա,  
տը: Մեր քով միւս պատրաստ կայ  
Հայկական ամեն տեսակ սպորտներ, ա-  
ղը դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ,  
անթապ հալվախի, կանտնջ զէյթուն.  
Ձէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա-  
քառնի լօքում տեսակներովը, ոսպ աղ-  
ցուած կամ չաղցուած, սուսախ, սիսեռ  
Պօլոյ խաչար պանիր, լէպլէպի շաքա-  
րի տեսակներով, քիմիոն, անասն, պատ-  
տական իտուկ. աղւոր ալիւրէ հաց  
2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե-  
ղած յանձնարարութիւնք փութով և քիչ  
վարձով կը կատարենք մեր յատուկ  
կառքով: վճարու մեքենայ կանխիկ են և ոչ  
ապառեկ:

Նաև կը ծախեն Պամիր, Խոյսերի  
Պատրմա Սաւուր և սիկարի թուղթ:

ԱՉԴ  
Կը ծանուցանենք Հայ Հասարակու-  
թեան թէ՛ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ  
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-  
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-  
ՂԷՆՆԵՐ ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ:  
Յանձնարարութիւնք կը կատարուին  
փութով և խնամով:  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱՅ  
Մեր Հասցէն է  
Tyler Grocery Co.  
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐՆՈՐ ԱՉԴ  
Ճաշկի յարմար պատուական ապուխտ  
(Խոյսերի Պատրմայ) կը պատրաս-  
տեմ, քիչն է՝ փառուտը 35 սէնթ. վա-  
ճառման կեդրոնանոցին:  
Տ. ՍԵՄԷՐՅԱՆ  
113 TYLER ST BOSTON MASS

231 Իսթ 28 րդ. Փողոց  
Նիւ-Եորք  
Մ. Գաղանձեան և Պ. Մուշեղեան:  
Կը վաճառենք տեղական ու արևել-  
եան ամէն տեսակ նպարեղները. Հօլ-  
սթիլի գնով, քիչն է՛ մեզի անձամբ կամ  
նամակաւ: շուտով կը զրկենք ուր որ  
ուզուի:

Ահա մեր զներուն ցանկը իւրաքան-  
չիւր փառուտ սէնթի հաշուով. ձիթա-  
պտուղ 9. Ուստի պոլոյ քօտ մաս  
քուր 3 1/2. Հայկական պանիր 10. Լօքում  
շեքերի 10. Շամ Փոստի 28. Պամեայ 28.  
Ճերմակ Ֆայսիեայ 5. Նուշ 18. Չամիչ 8.  
Սալոր 5. Մայսի 15. Ընկոյզ 14. Յետի 13.  
Խոտմա 5. Լեպլեպուտ աքաբ 20. Հինա 50  
Յանկական սօր 7. Սիսառ 5. Գառնի միս  
տեղ մորթուած 7. Մայսերի պատրմայ  
և Մուշեղի 35. Թէ աղի և Թէ աղի լեպ  
լեպուտ 15. Լեպլեպուտ ամենալաւ 28.  
սէնթ ամէն մէկ փառուտը. Ունինք նաև  
Բիմիոն. Չաման. Տարչին. Լեմոն թուղթ  
և տեղական սպորտաց ամէն տեսակը:

ԱՉԴ  
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ  
Ուստի մէջ կերպար տարիներէ ի վեր  
հաստատած ենք մեր յատուկ պուլոյրի  
գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փա-  
ճառութիւն ունենալով, ամենալաւ ցո-  
րինէ կը պատրաստենք ընտիր պուլոյր,  
որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատ-  
կութիւններով « ամառայիններու » Եւ-  
րոպայականներու զնահատութեան ար-  
ժանացած է: Կը պատրաստենք նաև նոյն-  
պէս ընտիր ծեծած և կորկոտ:

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և  
սխորժակաւ կերակուր լինելու պուլոյր  
և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի  
մեզ: Ապապրանքներ փութով կը կա-  
տարուին: մանրամասն տեղեկութեանց  
համար պէտք է դիմել Եւրեալ Հասցէին:  
Ուստի, Պուլոյրի Միացեալ Ընկ.  
151 Իւնիքս սթ., Ուսթըր Մասս.  
Տաճկական տեսակ տեսակ ապրանք-  
ներ ալ կը ծախենք:

Պատիւ ունի ծանուցանել արգել  
Հասարակութեան թէ իւր վաճառած  
ով պիւրեղներն ոչ թմայն փորձով և  
անխորաչախ են, այլ և դիւրամատչելի  
են ամէն դասակարգի անձանց:  
Այս վաճառատան մէջ կը ծախ-  
ուին Եւրոպայական, տեղական, Բալ-  
թորիական և ամերիկական ամէն տեսակ  
ուրիշ, օղի, քիմի, շամբախի, մաս-  
թիլայ, դարեկոյր, պրանտի, ափսնիլ  
և այլն, իրենց ամեն տեսակներով:  
Փափաքողաց գնելու ցուցակը և  
զրկուի առանց օ՛ր և է ծախքի:  
Յանձնարարութիւնք կը կատար-  
ուին ամենայն ճշգրտութեամբ եւ փութ-  
ով: Բաղաքին մէջ ապրանքներն  
չրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս  
զրկուածներուն ծախքը գնողներուն  
վրայ է:

Ըմպլիներ կը վաճառուին թէ  
մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ,  
իրենց յատուկ զներով: (Հօլսթ. Ա. անս-  
րիթէլ):  
Մեր յանձնարարք երբ չի հաւելի  
իրենց գնած ըմպլիներուն, յանձն-  
կանները զպիտ փոխել, եթէ պակ-  
սած ու մնասուած չըլլան:  
Ըմպլիներ կը վաճառուին շի-  
շով, կալքով, տակառով և յատուկ  
անտուկներով որք կը պարտուակին 12  
կամ 24 շիշեր:

Գիմել յիւեալ Հասցէին կամ  
Յ. Ս. ՍԵՄԷՐՅԱՆ  
535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.